

7184

631.8

U-26

№ 54 «ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 54

Ա. ԱԹԱՆԱՍՅԱՆ

ԴԵՊՒ

ԲԵՐՔԻ ԲԱԲՁՐԱՅՈՒՄ

(ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍԵՐՄԱՆՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՌՔԻՎ)



2002

631.8
Ա-26

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1929

2011

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

- | | |
|---|-------|
| 1. Ուղեցույց անառային աշխատավորի | 50 կ. |
| 2. Փրոււմյան յեզ Ս. Մելիքոյան—Ինչո՞ւ ձեռնառ չե գործարանում յուզ և շփելը. պանիր պատրաստելը (սպառ.) | 20 » |
| 3. Փրոււմյան—Ստորութիւնները և նրանց մշակութիւն յեղանակները (սպառ.) | 3 » |
| 4. Փրոււմյան—Ստորութիւնները և նրանց մշակութիւն յեղանակները (սպառ.) | 10 » |
| 5. Փրոււմյան—Ստորութիւնները և նրանց մշակութիւն յեղանակները (սպառ.) | |
| 6. Պ. Հեփմյան.—Թիֆլիսի մշակութիւնը | 10 » |
| 7. Պ. Հեփմյան.—Շերամի վորզը, նրա կերակրելն ու խնամքը | 10 » |
| 8. Խ. Յերիցյան.—Կաթնատնտեսութիւն գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) (սպառված) 1ռ. | 50 » |
| 9. Կ. Մելիք-Շահնազարյան.—Մխախտի մշակութիւնը (սպառված) | 20 » |
| 10. Ս. Ֆրիզովից.—Տասը պատգամ անասնապահին | 20 » |
| 11. Խ. Յերիցյան.—Աննատական, թի կոոպ. կաթնատնտեսութիւն | 10 » |
| 12. Հ. Լաուրյան.—Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո) (սպառ) | 5 » |
| 13. Մ. Թումանյան.—Շարքացանը և նրա նշանակութ. 15 » | |
| 14. Խ. Տեր-Ներսիսյան.—Ինչպե՞ս մշակել խաղողի այգիները (28 նկարով) (սպառ.) | 35 » |
| 15. Յերեսեերս զեպի գուզ.—Անդրկովկասյան Յերկրային կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին. | |

Ա. ԱԹԱՆԱՅԱՆ

631-8
4-26
պ

ԴԵՊՏ

ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

(ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍԵՐՄԱՆՄԱՆ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՌԹԻԿ)



39582-ԱԿ.

ԴԵՊԻ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հասել են գարնան սերմանման որերը: Այն աշխատանքն ու լեռանդը, վոր մեր գյուղացին թափում է այս որերին— դա յե վոր գլխավորապես պիտի ապահովի տարվա մնացած որերին նրա հացը, նրա անասունների կերը, նրան անհրաժեշտ մյուս մթերքներն ու կարիքները:

Գարնան սերմանման կամպանիայից է կախված վոչ միայն մեր չքավոր ու միջակ գյուղացու հաջողություններն ու նվաճումները, այլև դրա թափից ու չափիցն է կախված նաև Բանվորա-Գյուղացիական մեր իշխանության հետագա ամրացումն ու առաջադիմությունը:

Մեծ չափով դրանից է կախված չերկրի ինդուստրիալիզացման անհրաժեշտ թափը: Պիտի գիտենալ, վոր առանց ինդուստրիալիզացիայի ուժեղացման, չի կարելի չենթադրել գյուղատնտեսության բարելավման և նրա վերակառուցման գործը:

Ահա այս խնդիրներն ու նպատակներն են, վոր պարտավորեցնում են ամեն ջանք ու չե-



(6105) 22770-Ա
41

Գրառեպ. № 1833(բ). Պատ. № 394. Տիրաժ 5000

Պետհրատի լեկտրոգ տպարան— Յերևանում

ուանդ գործ դնել՝ հաղթող դուրս գալու սերման-
ման կամպանիայից:

Այս ասպարիզում տեսնենք ինչ խնդիրներ
են դրված մեր առաջ և առաջին հերթին՝ մեր
աշխատավոր գյուղացու, սերմանման յեռյ կնե-
րի և մեր ազրոկագմի առաջ, վորոնք տեղերում
ղեկավարելու յեն սերմանման կամպանիան:

1. ԲԵՐՔԻ ԲԱՐՉՐԱՅՈՒՄԸ

Այս կամպանիային մեր առաջին և ա-
մենագլխավոր նպատակը՝ լինելու յե բերքի
բարձրացումը և ամենից առաջ՝ հացի բերքի
բարձրացումը:

Ինչո՞ւ.— վորովհետև վոչ մի աշխատանքում
մենք այնքան յեռ չենք մնացել, վորքան հացա-
հատիկների բարձր բերք ստանալու գործում:

Վոր մեր հողերը լավ ու խնամքով մշակե-
լու զեպքում կարող են տալ յերկու և յերեք
անգամ ավելի բերք, քան այժմ ենք ստանում—
դա գիտե ամեն մի աշխատասեր ու լավ ուսնչ-
պար. այդ նույն բանը հայտնի յե մեր ցուցա-
դաշտերի և ցուցահողամասերի վերջին յերկու
յերեք տարվա վորձերից:

Հեկտարից 500—600 փուլը կարտոֆիլի
բերքը Հոյաստանում համարվում է միջին բերք,

այնինչ ամեն մի գյուղում կգտնեք անհատ
լավ հողագործ գյուղացիներ, վորոնք մի հեկ-
տարից ստանում են 900—1500 փուլ կարտո-
ֆիլ, այսինքն՝ յերկու-յերեք անգամ ավելի:

Յեկ ահա, յերբ հետաքրքրվում, հարց ու
փորձ ենք անում մեծ բերք ստացող գյուղացի-
ներից կամ գյուղատնտեսներից, պարզվում է,
վոր մեծ բերք ստանալու համար նրանք դիմել
են մի հետևյալ միջոցներին.—

ա) յերկաթե գուլթաններով, լավ մշակել
են իրենց հողերը.

բ) արտը պարտրտացրել են գոմաղբով,
մոխրով կամ քուսպի այլուրով.

գ) ձեռք են բերել լավ, մաքուր, առողջ և
տեղին համապատասխան սերմ.

դ) ցանել են շարքացան մեքենայով, իսկ
յեթե ձեռքով են ցանել, ապա այն կատարել են
խնամքով, այսինքն՝ ցանել են հողը փոցխով լավ
փուխրացնելուց հետո.

յե)՝ արտն իր ժամանակին քաղհանել են,
այսինքն՝ ցանքն ագատել են մոլախոտերից.

զ) յեթե ցանքն ջրովի յե, ուրեմն ջրել են
իր ժամանակին և խնամքով—վոչ այնքան շատ,
վոր արտը ճահիճ դառնա և վոչ էլ այնքան քիչ,
վոր արտը ծարավի: Սրանից տեսնում ենք, թե
ինչու՞մն է կայանում բերքի ավելացման գաղտ-

նիբըր և այն, թե ինչ պետք է մենք անենք, վորպեսզի ստանանք յերկու, յերեք և նույնիսկ չորս անգամ մեծ բերք, քան մենք ստանում ենք սովորաբար մեր արտերից—լինի դա հացա հատիկ—ցորեն, գարի, հաճար, թե բամբակ կարտոֆիլ, առվույտ, բանջարեղեն, ձմերուկ, սեխ և այլն: Ահա այդ միջոցների մասին է, վոր խոսելու չենք այս գրքույկի մեջ, և այն ել սերմանման կամպանիայի շրջանում, վորպեսզի մեր չքավոր ու միջակ գյուղացիք և մեր նոր կադմակերպվող կոլտնտեսութունների անդամները պարզ գիտակցեն, թե բերքն ավելացնելու համար վոր աշխատանքը, ինչու, չէրբ և ինչպես պետք է կատարել՝ հաղթող գուրս գալու համար թե այս կամպանիային և թե՛ այսուհետև:

2. ԼԵՎ ՎԵՐՐ

Բերքի բարձրացման ամենաառաջին պայմանն՝ իր ժամանակին յեվ լավ կատարած վարն է: Վարը հողի մշակութունն է, նրան սերմելու նպատակով պինդ դրութունից փափուկ դրության դարձնելն է, վորը մեզնում մեծ մասամբ կատարվում է չութերով և, համեմատաբար, քիչ քանակությամբ՝ յերկաթե գութաններով:

Հազարավոր փորձերը ցույց են տվել, վոր գութաններով արած վարը ավելի մեծ բերք է տալիս, քան չութով կատարածը:

— Ինչո՞ւ:

— Այն պարզ պատճառով, վոր չութը—արորը—հողը շուռ չի տալիս, հողի մեջ գտնված մոլախոտերի արմատները չի կտրում, դուրս չի բերում: Բացի այդ, հողի փափկացումը արորի միջոցով կատարվում է յերեսանց՝ ընդամենը մի յերկու մատ հաստությամբ և այն ել վոչ հավասար. մենք գիտենք, թե չութը վորքան խամտեղ է թողնում արտում:

Գութանը դրա հակառակ՝ վերցնո մ է խորր, 3—6 վերշոկ խորությամբ շուռ է տալիս հողը, կտրում և նրա մեջ յեղած մոլախոտերի արմատները, վորոնց հետո հեշտ է լինում փոցխերով գուրս բերել հողի յերեսը, ժողովել, արտը մաքրել դրանցից և հետո շարքացան բանեցնել: Բացի այդ, գութանն արտում խամտեղեր չի թողնում:

Այնուհետև, վորքան հողը խորն է վարած, այնքան անձրևը, ձյունը, վոռոգման ջրերը ավելի խորն են մտնում հողի մեջ և, մնալով այնտեղ, պաշար են դառնում մեր ցանած բույսի համար:

Զութավարը գութանավարի ձիշտ հակա-

նակն ե. ձյունը, անձրևը, ջուրը խորը չեն ծծվում հողի մեջ, այլ մնում են նրա յերեսին, ուստի բավական ե, վոր մի 10—15 որ անձրև չգա, չորությունն անի և ահա յեղած ջուրը մի-քանի որում ցամաքում, գոլորշիանում ե, հողը պնդանում ե և դրա հետևանքով, մանավանդ կավային հողերում, արտի յերեսին կեղեկ ե կապում, և մեր ցանածը փոխանակ աճելու, բոլ բշելու, ընդհակառակը մնում ե կարճ, դեղնում ե, չմշկում, այսպիսի արտերի ցորենն ու գարին հասնելուց հետո մնում են կարճ, հասկերը նվազ, միջի հատիկները մանր, ցողունը բարակ: Հասկանալի չե, վոր այդպիսի արտի բերքն ել կլինի նվազ ու քիչ:

Դրա որինակներն ունենք:

Ահա թե ինչու կոմմունիստական կուսակցությունը, Խորհրդային իշխանությունը և մեր բոլոր գյուղատնտեսները կռիվ են մղում արորի-չուրի դեմ և գյուղացուն խորհուրդ են տալիս վոր նա յերբեք, ուր այդ հնարավոր ե, չդիմի չուրթին, նրանից կտրականապես հրաժարվի և իր արտը վարի յերկաթե գութաններով, վորովհետև փորձը մեզ ցույց ե տվել, վոր չուրթ յերկու-յերեք անգամ պակասեցնում ե բերքը, նրա վորակը և մեր գյուղացու այն թշնամին ե գառնում, վորի դեմ պետք ե կռիվ հայտարարել և անողոր կովել:

3. ՎՈՐՏԵՂԻՑ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՉԵՌՔ ԲԵՐԵԼ ԳՈՐԹԱՆՆԵՐ ՅԵՎ ԱՅԼ ԳՈՐԹԻՔՆԵՐ

Չուրթով վարողներն արդարանում են նրանով, թե չուրթն եժան ե, իսկ գութանը՝ թանգ, վոր չուրթով վարելիս բավական ե մի գույգ չեզ, իսկ գութանով վարելիս պետք ե ուունենալ չորս-հինգ գույգ և այլն:

Դա ճիշտ ե այն դեպքում, յերբ չքավոր կամ միջակ գյուղացին ուզում ե իր արտը վարել մենակ—անհատապես, իր ուժերով: Այնինչ, յեթե այդպիսի գյուղացիները միանան 5—10—15 տնտեսություններով, կազմեն մի կոլլեկտիվ, արտել կամ ընկերություն—նրանք, վորպես մեքենատգտագործական պարզ արիւլի միավորներ, կարող են վարկ ստանալ գյուղբանկից, փոխադարձ վարկի ընկերությունից, փոկերից և դրանով ձեռք կբերեն գութաններ, փոցխեր, շարքացաններ, սերմագտիչներ և այլն, վորով և կկատարին իրանց հողերի մշակությունը լավ գութաններով և այլ մեքենաներով, բանեցնելով դրանց հենց իրենց ունեցած անասուններով:

Բացի այդ միջոցից կան և ուրիշ միջոցներ—դրանք մեր շրջանային և գավառակային կենտրոններում գոյություն ունեցող ագրոկալաններն ու վարձակետերն են, ուր կան ամեն

տեսակի գուլթաններ ու մեքենաներ, վորոնք մասամբ ճրի, մասամբ շատ եժան վարձով տրվում են չքավոր ու միջակ գյուղացիներին ոգտագործելու:

Դրանց ել պետք է դիմեն մեր գյուղացիները սերմանման կամպանիայի ժամանակ ու, դեն գցելով չուլթն ու արորը, իրանց հողերը վարեն, փոցխեն, ցանեն այդ հաստատութիւնների մեջ գտնված և գյուղացիներին տրվող մեքենաներով ու գործիքներով, դիմելով շրջանային գյուղատնտեսի խորհուրդին— թե գուլթաններից վճրն ընտրել և ինչպես բանեցնել:

4. ՅՐԲԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ՎԱՐԸ

Վարի ամենալավ և հարմար ժամանակը՝ աշունն է, յերբ գյուղացին ամենից շատ ազատ ժամանակ ունի գարնան ցանքսի համար իր հողը հերկելու: Բայց մեղնում գարնանացանի վարը մեծ մասամբ կատարվում է նույն գարնանը և կատարվում է շատ պարզ, բայց վնասակար յեղանակով: Գյուղացին խողանի վրա, առանց հողը նախապես վարելու, սերմը շաղ ե տալիս և հետո միայն չուլթով վարում է ու սերմը չուլթով մի կերպ ծածկելուց հետո, տափանում կամ փոցխում է և դրանով ամեն ինչ վերջացած է համարում:

Պարզ է, վոր այդպես արած ցանքսը բավարար բերք չի կարող տալ:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև, իսկապես ասած, ցանողն այս յեղանակով հողը վոչ մի մշակության չի յնութարկել, ցանելու համար չի նախապատրաստել: Նա միայն իրեն խաբել է, կարծելով թե յերկրագործութիւնն է անում: Ձե՞ վոր դրանով հողը չի փափկել, չի քայքայվել, այլ նրա միայն վերին բարակ շերտն է փոքր ինչ քանդեցնուվել և այն էլ վոչ բոլորովին:

Վորտեղից պետք է մեր ցանած սերմն իր համար կերակուր ստանա, յերբ նա գտնվում է միայն հողի վերին աննշան բարակ շերտի մեջ, իսկ նրա տակին գտնված հողը ամուր է քարի պես, ուրեմն և բույսը հնարավորութիւնն չունի իր արմատները խորացնելու և հողի ցածր շերտից իր համար կերակուր, սնունդ ստանալու:

Իսկ ջուրն ու խոնավութիւնը, վոր այնքան հարկավոր են ցանած սերմի համար, վճրտեղից և ինչպես է կարող նա վերցնել, ծծել, յերբ այդպես արած վարով ջուրը չի կարողացել և չի կարող մտնել հողի խորքը— այնտեղ ամբարվելու և մեր ցանած բույսին այնուհետև պետք գալու:

Պարզ է, վոր այսպես արած ցանքն ու հո-

ղի մշակութունն ամենից վատն է, և զարմանալի ել կլինենք, չեթե այդպես արած ցանքսը մեծ ու հաստատուն բերք տար:

Ցանքի և հողի մշակութան այդ յեղանակը, վորպես ավաղկարս փնասակար, պետք է թողնել և անցնել հողի մշակութան իսկական ձևերին:

— Վհրն է այդ ձևը:

— Դանախ և առաջ զարնան զուժանավարն է, վորից հետո պետք է հողը յերկաթե «զիգ-զագ» կոչված կամ ուրիշ փոցխերով փոցխել, կոշտերը մանրացնել, հողի մեջ գտնված մոլախոտերի արմատներն հանել, դուրս բերել: Ահա դրանից հետո չե, վոր պետք է կատարել ցանքսը խնամքով, հավասար, լավ սերմերով և, ուր այդ հնարավոր է, շարքացան մեքենայով:

Այդպես են վարում հողը մեր բոլոր ագրուկայանները, ցուցադաշտերը, և նրանց արած այդպիսի վարից ստացած բերքը 20—25—30 տոկոսով բարձր է այն գյուղացիների բերքից, վորոնք հողի մշակութունն ու ցանքը կատարել են վերը հիշած խոզանացանքս անելու յեղանակով: Վախենալ, վոր գութանավարով կատարած վարը կուշանա և սերմերու ժամանակ չի լինի—անտեղի չե այն պարզ պատճառով, վոր զարնան անձրևները միշտ ել ժամանակ ունեն

խորը մանելու գութանավար արած հողի մեջ, վորով մեր ցանքսի աշող ծլումն ու զարգացումը ապահովված է:

Այսպիսի չերկու փորձ կատարել են հենց մեր գյուղացիք Փամբակի Աշլաղ գյուղում: Խոզանավարի մի հեկտարից նրանք ստացան չոթ ցենտներ կամ 42 փուլթ ցորեն, իսկ նույն հանդում կատարած գութանավարից ստացվեց ինն ու կես ցենտներ կամ 58 փուլթ, այսինքն՝ 15 փուլթ ավելի: Նույն արդյունքներն ստացվեցին Լենինականի զավառի Դուզքյանղի դաշտում կատարված փորձնական ցանքսից. այսինքն, այն ժամանակ, չերք գարնանը գութանով վարած և փոցխած ու հետո սերմած արտը հեկտարից տվեց տաս ցենտներ, կամ 60 փուլթ բերք, խոզանացանքսը տվեց ընդամենը չոթ ցենտներ կամ 42 փուլթ, այսինքն՝ տասնևութ փուլթ պակաս:

Բերքի բարձրացման համար սկսված կամպանիայի ժամանակ անթուլատրելի չե խոզանացանքս առանց գութանավարի, ուստի ամեն տեղ, ուր այդ հնարավոր է, պետք է կովել դրա դեմ և անպայման անցնել գութանավարին և փոցխով մշակելուն:

5. Ի՞նչով ՅԵՎ ՅԵՐՐԲ ՊԵՏԻ Ե ՊԱՐԱՐՏԱԳՆՆԵԼ ՀՈՂԸ

Հողը պարարտացնելը, նրան աղբելը բերքն ափելացնելու մյուս գլխավոր պայմանն է:

Ի՞նչու չենք աղբում հողը:

Հողն աղբում, պարարտացնում ենք, վորպեսզի նրան վերադարձնենք այն սնունդը, վոր նրանից վերցրել է արտում ցանված նախորդ բույսը:

Մենք գիտենք, վոր յերբ միևնույն հողի վրա մի քանի տարի շարունակ ցանում ենք նույն բույսը, այսինքն՝ ցորեն, գարի, հաճար, բամբակ, կարտոֆիլ և այլն, տալեց-տարի բերքը քչանում է, իսկ յերբ մի չերկու տարի նույն հողը չենք ցանում, հանգիստ ենք տալիս, կամ պարարտացնում, -- աղբում ենք, հողի բերքատուլութունը նորից բարձրանում է:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև հողին հանգիստ տալով, նրա մեջ այդ մի չերկու տարում նորից ափելանում է սնունդը, կուտակվում է հողի մեջ բույսին անհրաժեշտ կերակուրը, իսկ չերբ պարարտացնում ու աղբում ենք, այլևս կարիք չկա վոր մի չերկու-յերեք տարի սպասենք, այլ հենց նույն տարում կարող ենք հողը վարել, ցանել ու լավ բերք ստանալ:

Ուրեմն՝ աղբելու դեպքում մենք արագացնում ենք հողը՝ բույսի համար անհրաժեշտ սրննդով հարստացնելու գործը -- առանց ժամանակ կորցնելու, մի չերկու տարի սպասելու:

Այս բանը իրանց փորձով գիտեն մեր գյուղացիները, բայց կամ չեն կատարում, կամ, չեթե կատարում -- աղբում են, ապա այդ անում են շատ քիչ հողերի նկատմամբ:

Ինչո՞վ են նրանք արգարացնում իրանց:

Նրանով, վոր ասում են, թե իրանք աչքան աղբ չունեն, վոր տնտեսության մեջ յեղած աղբը գործ են ածում վորպես վառելիք:

Ճիշտ է արդյոք այդ արգարացումը, մի՞թե մեր գյուղացու տնտեսության մեջ չկան ուրիշ նյութեր, վորոնք կարող եյին փոխարինել տավարի աղբին -- փեյինին:

Կան և շատ կան, թեթե միայն գյուղացին վճուր դրանց խնամքով ժողովել, պահել և, արտը տանելով, աղբեր իր ցանքսը:

Վորոնք են այդ նյութերը:

Նախ և առաջ այն մոխիրը, վոր ամեն որ ստացվում է գյուղացու տնտեսության մեջ և վորն անխնա դուրս է հանվում ու անպետք ցրվում տների առաջ, փողոցներում, ձորերում, և վորը, չեթե ժողովի գյուղի վորոշ տեղերում կամ ամեն մի տնտեսության մեջ ու գարնանը դաշտ

տարվի—հենց միայն դրանով մեր ամեն մի գյուղ կարող է գարնանը տասնյակ և հարյուր հեկտար պարարտացնել մոխրի մնացորդներով: Հետո գալիս է գյուղական տնտեսութուններում ամեն ուր ավելուց գոյացող աղբը—տնային զիբիլը, ըակերի աղբը, փողոցներում գոյացող աղբն ու զիբիլը, վորոնք նույնպես, չեթե վորոշ տեղերում ժողովվեն և պահվեն, դարձյալ կարող են պարարտացման մեծաքանակ նյութ դառնալ—հարյուրավոր հեկտար արտ ու բանջարանոցներ պարարտացնելու համար:

Հիմա՝ գարնանային այս կամպանիային պետք է մեր գյուղերում կուտակված, չերբեմն բլուրներ կազմող այդ բոլոր մոխիրն ու աղբը, զիբիլն ու մնացորդները ժողովելու շաքաթորյակ կազմակերպել և գյուղովի՝ սայլերով, քթոցներով կրել արտերն ու բանջարանոցները, ցրել դրանց վրա՝ նախքան վարելն ու սերմանելը:

Այդ աշխատանքն ընկնում է ամեն մի գյուղի գյուղացիների, գյուղի ակտիվի վրա, վորոնք գյուղսեկցիայի հետ սերմանման յեռյակի ուժեղ աջակցությամբ պետք է գյուղը մաքրեն ամեն տեսակ աղբից, մոխրից ու զիբիլից և այդ բոլորը տանեն արտերը՝ աղբելու ու պարարտացնելու համար:

Վոր դրանցով պարարտացրած հողերի բեր-

բատվությունը 10—15 տոկոսով կբարձրանա—դրա որինակները մենք շատ ունենք:

6. ԼՍՎ ՍԵՐՄԱՅՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Մաքուր, լիքը, ծանր և առողջ սերմը մեծ բերք ստանալու մյուս նախապայմանն է:

Սերմն ընկնելով հողի մեջ, իր աճման շրջանում սախաված է կուվել բազմաթիվ արգելքների և վտանգների դեմ: Յուրաք, խոնավությունը, մեծ ջերմությունը, հողի կոշտերը, քամին, փոփոխվող յեղանակները, հողի մեջ կամ դրսում գտնվող բազմաթիվ իջատներն ու հիվանդությունները նոր ծլող և մատղաջ բույսի մրտական թշնամիներն են, վորոնց հետ մեր սերմն ու նրանից առաջացող բույսը պետք է համառ կռիվ մղեն ու հաղթեն:

Յեվ ահա այդ բազմաթիվ արգելքների դեմ կարող է կուվել ու հաղթող դուրս գալ միայն այն բույսը, վորի սերմն առողջ է, ինքը դիմացկուն և ուժեղ:

Ահա թե ինչու մենք ցանելիս ամենից առաջ ընտրում ենք լավ սերմացու:

Ի՞նչպես ստանանք լավ սերմացու:

Դրա համար պետք է ընտրել ու զտել մեր ունեցած սերմի միջից այն հատիկները, վորոնք ունեն վերը հիշած հատկությունները:

6105 22722 14 5019



— Ինչպէս:

Հատուկ մեքենաների միջոցով, վորոնք կոչվում են տրիկերներ և սերմագտիչներ: Դրանց մեջ գտնված զանազան մաղերն այնպէս են հարմարեցրած, վոր նրանցից զատվում, դուրս են գալիս բոլոր թեթև, կրծված, նվազ սերմերը, հետո ավազի, քարի, հողի, դարմանի մնացորդները, իսկ չեղած առողջ հատիկները մեքենան բաժանում է մի քանի տեսակների՝ ամենից խոշորներն ու ծանրներն առանձին, իսկ դրանցից ավելի նվազներն՝ առանձին:

Ահա այդ խոշոր ու ծանր սերմերն են, վոր համարվում են ամենից լավերն ու դրանք են, վոր պետք է մաքրվեն, ցանվեն ու մեղ բարձր բերք տան:

Այս գարնան սերմանման կամպանիային մեր բոլոր շրջանային կենտրոններում և մեծ գյուղերում կան հատուկ սերմագտիչ խմբեր, վորոնք գործելու յեն ագրոկայաններին և վարձակայաններին կից:

Ահա այդտեղ ել մեր գյուղացին պետք է տանի գարնանացանի իր սերմացուն գտել տալու: Սերմացուչի գտումը չքավորների համար կատարվելու յե ձրի, իսկ միջակների համար՝ չընչին վարձով:

Բացի այդ մշտական սերմագտիչ կետերից,


հեռավոր գյուղերի համար կազմակերպվում են սերմագտիչ շրջիկ խմբեր, վորոնք, շրջելով գյուղից-գյուղ, գտելու յեն հեռավոր գյուղերի սերմացուն նույն պայմաններով:

Թող այս գարնան կամպանիայի մեր նշանաբանը լինի՝ ջգանել վոչ մի հատիկ սերմ, վորը գտված չի սերմագտիչների միջոցով, կամ վորը ընտրված չի:

Կարող են պատահել դեպքեր, յերբ այս կամ այն պատճառով (վատ ձանապարհներ, ժամանակի կարճութուն և այլն) այդ շրջիկ սերմագտիչ խմբերը հնարավորութուն չեն ունենալ բոլոր գյուղերը գնալ, — այդ դեպքում մեր գյուղակտիվը չպետք է ձեռքերը ծալած նստի, այլ նա կարող է և պետք է կազմակերպի սերմացուչի մաքրումը ձեռքով — տեղական աղունի մաղերով: Այդ միջոցով նույնպէս կարելի յե 70—80 տոկոս լավ սերմացու ստանալ:

Յեվ անա մեր կոմյերիտի, գյուղի ակտիվի, կոոպերատորի, կոլտնտեսութունների վարչութիւնների և փոկերի վրա յե ընկնում գարնան սերմացուչի մաքրման գործի լավ կազմակերպումը տեղերում, ամեն մի գյուղում — հիշելով, վոր լավ սերմացուն է, վոր տալիս է լավ բերք:

Թող այս աշխատանքի մեջ վոչ վոք հետ չմնա, այլ բոլորն ոգնեն, բոլորն աշխատեն այն-



պէս, վորպեսզի մենք կարողանանք ասել, վոր այս կամպանիային մեզ առաջադրած ծրագիրը կատարել ենք հարյուր տոկոսով:

7. ՍԵՐՄԱՑՈՒՆ ՊԵՏՔ Ե ԱՍՏԱՀԱՆԵԼ

Լավ սերմացուն պետք է լինի առողջ այ լինքն՝ հիվանդութիւններից ազատ. հակառակ դեպքում՝ մենք բերքի ահագին կորուստ կունենանք:

Քյուղատնտեսական բույսերն ու նրանց սերմերն ունեն բազմաթիվ հիվանդութիւններ, վորոնց դեմ պետք է ուժեղ և միահամուռ կռիվներ, նրանց բժշկենք: Մեր հացահատիկների ամենից մեծ վնասատուն մրիկն է, վորը սևացնում, փչացնում և յերբեմն նաև թունավորում է հացահատիկն ու հացը: Մրիկի պաճառով մեր արտերի բերքի զգալի տոկոսը վոչնչանում է, փուչ է դուրս գալիս: Դրա դեմ էլ մենք պետք է պաշտարենք՝ սերմացուն ախտահանելու միջոցով, վորը կատարվում է ֆորմալին կոչված դեղի կամ պղնձի արջասպի (կապույտ շիբի) լուծույթով: Ախտահանելու և բուժելու այդ միջոցին պետք է դիմել հենց գարնան սկզբին, յիլ է հորերից ու ամբարներից հանում ենք սերմացուն և պատրաստվում ենք ցանելու: Ախտահանելու յեղանակը ցույց կտա շրջագրոնսով:

Մեր ագրոկայաններում և սերմանման յեռակների տրամադրութեան տակ պետք է լինեն այդ դեղերը. դրա համար էլ ամեն մի սերմացան պարտավոր է դիմել այդտեղ և խնդրել, վոր իր սերմացուն ախտահանվի մրիկից, լավ իմանալով, վոր սերմացույի ախտահանումը բերքատուութեան բարձրացման կարևոր միջոցներից մեկն է:

8. ՅԵՐՔԱՅԱՆՔՆԸ ՈՒ ՆՐԱ ՈՒՍՏՆԵՐԸ

Հացահատիկների ցանքը մեզնում ամեն տեղ անում են ձեռքով՝ շաղ տալով. դրա համար էլ լավ և վատ արած ցանքը կախված է նրանից, թե ով է ցանել: Յեթե ցանողը հմուտ, փորձված ունչպար է, նրա արած ցանքը լինում է համեմատաբար լավ՝ հավասար, միանման, իսկ յեթե ցանողը խամ է, անփորձ կամ քիչ փորձված, նրա ցանքն էլ ստացվում է անհավասար, տեղ-տեղ շատ խիտ, տեղ-տեղ ցանցառ կամ նույնիսկ խամ: Դրա հետևանքով էլ, իհարկե, վնասվում է ցանքսն ու արտը, վորից բերքն էլ ստացվում է պակաս: Այդպիսի ցանված արտի հունձն էլ դժվարանում է և հնձողների մեջ դժգոհութիւն ու ծաղր առաջ բերում:

Յեվ անա, վորպեսզի ցանքը լինի միանման հարթ ու հավասար, միաչափ ու կանոնավոր և վոր-

պետոյի սերմի հատիկները վորոշ հեռավորութիւն վրա ընկած լինեն հողի մեջ ու հավասար ել հողով ծածկվեն, հավասար ոգ, ջուր, լույս, օտարութիւն և սնունդ ստանան հողից և ընկած տեղից, — հնարել են հատուկ մեքենաներ, վորոնք կոչվում են շարքացաններ: Այդ շարքացաններով արված ցանքը լինում է միահավասար, միանման և հարթ: Ծարքացանով կատարված արտի մեջ սերմերը ծլում են հավասար, միևնույն ուղիքում և, շնորհիվ դրան, նրանք, միացած ուժերով դեն են շարտում իրենց վրայից հողի կեղևը և միաժամանակ ել դուրս են գալիս հողի տակից առողջ ու անվնաս: Լենինականում մեքենայով կատարված շարքացանը իր կողքի շաղպանքից անցյալ տարվա համեմատութեամբ տվել 10—15 և ավելի տոկոս բերքի հավելում և, այդ այն պարզ պատճառով, վոր շարքացանքով կատարած ցանքսի ժամանակ սերմերի հատիկները ընկնում են հողի մեջ հավասար հեռավորութիւն վրա և վորոշ խորութիւն մեջ, ուստի բոլորը ծլում են մի ստիւն, խմբովին և հեշտութեամբ ճեղքում են հողի յերեսի կեղևն ու դուրս են գալիս: Բացի այդ, շարքացանն ունի մի ուրիշ առավելութիւն ել: Դա այն յե, վոր շարքացան մեքենայով ավելի քիչ սերմ է գնում, ուրեմն և սերմի մեծ խնայողութիւն է կատարվում: Որինակ, յեթե ձեռ-

քով ցանելիս պետք է հեկտարին ցանել 10—13 փութ, շարքացանով բավական է 6—8 փութ, վորն անագին խնայողութիւն է թէ չքավոր և թէ միջակ գյուղացու անտեսութիւն համար: Յեկ հենց սերմի այդ խնայողութիւնը միքանի տարում ծածկում է շարքացան մեքենայի արժեքը, յեթե նրանով տարվա մեջ ցանել են նույնիսկ 20—25 հեկտար:

Ծարքացան մեքենայով ցանելը, մանավանդ եժան է նստում կոյանտեսութիւններում, ուր միացած են 10, 15, 20 և ավելի անտեսութիւններ: Դրանց համար շարքացան մեքենան նույնքան անհրաժեշտ է և ոգտակար, վորքան տրակտորը և լավ գութանը, վորովհետև յերկու տարվա մեջ, հենց միայն սերմի խնայողութեամբ նրանք կծածկեն մեքենայի արժեքը և մեքենան նրանց կմնա աճուհետև ձրի:

Բայց շարքացան մեքենան պահանջում է, վորպետոյի հողը լինի լավ մշակված, լավ փութաքրած և նրա մեջ քարեր, մեծ կոշտեր, կնձիկներ ու մոլախոտեր չլինեն: Այսպիսով, անհ, շարքացանը գործածողից պահանջում է լավ ու խնամքով մշակված հող, վորը շարքացանի մյուս առավելութիւնն է:

Ծարքացան մեքենան կարելի յե բանեցնել լծելով և՛ ձիեր և՛ չեզներ, այն տարբերութեամբ,

վոր ձիւերով շարքացանքսը կատարվում է ավելի արագ, քան յեզներով: Մի շարքացանով որական կարելի յե ցանել 3—5 հեկտար, ուրեմն՝ գարնան ցանքաշրջանի 20—25 որերում մի մեքենայով կարելի յե անել 60—80 հեկտար հացահատիկի ցանք: Շարքացան մեքենաները հարմարեցրած են այնպես, վոր նրանցով ցանվում են զանազան տեսակի և մեծության սերմեր, սկսած առվույտի մանր սերմերից մինչև լոբին: Բամբակի սերմերի համար կան հատուկ շարքացաններ:

Մեզնում բացի բամբակացան շրջաններից, ուր այս տարի շարքացաններով ցանվելու յե 3500 հեկտար տարածութուն, մյուս շրջաններում այդ մեքենան համարյա թե անծանոթ է: Այս գարնանացանի ժամանակ Հայաստան են ներմուծվել բավական մեծ թվով շարքացաններ, վորոնցով պետք է կատարվի հացահատիկների ցանքսը:

Մեր նոր կազմվող կոլտնտեսութուններին և առաջադեմ գյուղացիներին է մնում այս տարվանից ամեն միջոց ձեռք առնել՝ տարեց-տարի իրենց ցանքսերը կատարելու շարքացաններով և հետզհետե վերացնելու այնքան անտնտես և անշահավետ շողացանքսը:

9. ՅԱՆՔԻ ԶՐԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

Մեզնում արտը ցանելուց հետո մինչև հունձը գյուղացին իր արտի վերաբերմամբ ամեն աշխատանք կատարած, ավարտած է համարում, և այնուհետև սպասում է, թե «աստված» ինչ կտա:

Բայց մի՞թե այդպես է, մի՞թե հացահատիկները ցանելուց հետո ուրիշ խնամքի ու աշխատանքի կարիք չեն զգում:

Իհարկե, զգում են և այդ ամենից առաջ արտի յերեսին հաճախ ջրելուց և անձրևներից առաջացած կեղևի մանրացնելն ու ջարդելն է, վորը թույլ չի տալիս ցանած բույսի ծիլերին դուրս գալ հողից: Այդ աշխատանքը պետք է կատարել փոցխերով, վորոնք իրենց ատամներով ջարդում են արտի յերեսին բռնած կեղևը, առանց վնասելու նրա տակին գտնվող մատղաջ ծիլերին: Պետք է միայն փոցխերը լինեն կամ «զիգ-զագ» տեսակի՝ մեջքի վրա շուռ տված, կամ թեթև տափաններ, վորպեսզի իրենց ատամներով ծիլերը իրենց տեղերից չհանեն:

Այդ աշխատանքն ամենակարևոր աշխատանքներից է, վորը պետք է կատարել անպայման — յեթե չենք ուզում բերքը բազդի կամքին թողնել:

Մի ուրիշ, վոչ պակաս կարևոր գործ— գա
արտերի մեջ բսած մոլախոտերի քաղհանն
ե այն ժամանակ, յերբ ցորենն ու գարին
և ընդհանրապես հացահատիկները յերկու թզա-
չափ բարձրացել են: Այդ շրջանում վայրի խո-
տերը շատ են նեղում դեռ մատղաշ և նոր բու-
սող ցանքին, ուստի անհրաժեշտ է մտնել ար-
տը և այդ վայրի խոտերը քաղհանելով՝ հեռացնել
ցանքի միջից: Քաղհանը չպետք է անել միայն
մի անգամ, այլ յերկու, յերբեմն և յերեք ան-
գամ, յեթե մոլախոտերը աչնուամենայնիվ չե-
րևում են արտերի մեջ: Վախենալ, վոր արտ
մտնելով ցորենը կամ գարին կվնասվի վոտքի
տակ, կշարդվի— հարկ չկա, քանի վոր նա այնքան
մատղաշ է, վոր մի քանի որից նորից կկանգնի,
կուղղվի: Այդպիսի աշխատանքն առառավելը կարող
է մեր գյուղացուց— նրա կնոջից, վորքահասակ
աղայից ու աղջկանից խլել 2—3 որ: Բայց դրա-
նից ստացած ոգուտը այնքան մեծ է, վոր մի
քանի անգամ կծածկի նրա թափած աշխատան-
քը, ազատելով արտը վնասատու բույսերից, վո-
րոնք որ-որի վրա խեղդելու չեն նրա ցանած
բույսը, իջեցնելով բերքը միքանի տոկոսով:

Հատկապես ուշք պետք է դարձնել գլուկի,
վայրի վորոնի, պոչուկի, տարեկանի և մանա-
վանդ փշաբույսերի քաղհանի վրա, վորոնք ցանած

արտի մեջ ազատ բուսնում են ու վնասում ցանքի
մաքրությանն ու նրանից սպասվելիք բերքը:

Մյուս խնամքը վերաբերում է արտերն ան-
խնամ ու անուշաղիք շրելուն:

Չուրը, մանավանդ մեր ջրարբի շրջանե-
րում, ամենից թանկագին հարստությունն է
գյուղացու համար, ուստի նրան խնամքով բա-
նեցնելը պետք է մեր առանձին հոգացողության
առարկան դառնա ամեն տեղ:

Իգուր է արտը 5—6 8 անգամ շրելը, յերբ
դրա կարիքը չկա: Այնինչ բազմաթիվ փոր
ձերով ապացուցված է, վոր շատ ջուր տա-
լը վոչ միայն ոգուտ չի տալիս ցանքին, այլ
շատ անգամ նրան վնասում է, պնդացնելով հո-
ղը և զարգացնելով արտում կողմնակի մոլա-
խոտեր, ուր բուն են դնում զանազան տեսակ
վնասատու միջատներ, ձու յեն ածում, բազմա-
նում են և վնասում ցանած բույսին:

Շատ շրելն առաջ է բերում նաև մեծ
թվով սնկային հիվանդություններ, վորոնց դեմ
հետո դժվար է լինում կռվել, նրանց վոչնչաց-
նել:

Ահա, թե ինչու անհրաժեշտ է, վորպեսզի
մեր գյուղացին մեծ խնամքով ու խնայողու-
թյամբ կատարի շրելը:

Խնայեցե՛ք ջուրը, աշխատեցե՛ք ցանած

բույսին սովորեցնել քիչ ջրով աճելու, զարգանալու: Փշրե՛ք արտերի յերեսին կապած կեղեվը, վորովհետեւ նա խանգարում է ցանած բույսին հողի տակից դուրս գալու չեւ ստոյգ մեծանալու: Բաղձանեցե՛ք արտերում բուսած մուշկտտերը, վորոնք իրանք ուտում, ծծում են հողից կուլտուրական բույսի սնունդի պաշարը:

Այս միջոցներով բերքը մենք բարձրացնում ենք տասնյակ տոկոսներով:

10. ԲԵՐՔԻ ԲԱՐՉՐԱՑՈՒՄԸ ՄԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԵԿ Ե

Մրանով ավարտում ենք այս փոքրիկ գրքուկը, վոր նվիրված է հատկապես սերմանման կամպանիային և բերքի բարձրացման ամենահրատապ խնդիրներին:

Մրանից յերևում է, թե ինչպես ամենապարզ ու հասկանալի պատճառներից մենք յերկրագործական մեր աշխատանքները տարել ենք անհոգ ու անուշաղիբ, վոր բավական է մեր գյուղացիների կողմից շատ քիչ ջանք ու թեթև աշխատանք, վորպեսզի մենք կարողանանք լավացնել և կատարելագործել մեր յերկրագործությունն ու հողից ստանանք շատ ավելի մեծ բերք, քան մենք ստանում ենք ներկայումս:

Թող սերմանման այս կամպանիան անցնի

ավելի չեռանդուն, ավելի գիտակից, քան այդ յեղևը և մինչև այժմ: Հիշենք, վոր բերքի բարձրացման արդյունքի մեջ է մեր չունևոր ու մի ջակ գյուղացու տնտեսության բարձրացումը, մեր Բանվորա-Գյուղացիական իշխանության աջողությունների ու հաղթանակի վորոշ մասը:

Այդ հաղթությունը տանելու, մեր տնտեսությունը սոցիալիստական ուղիով առաջ բաշելու համար Սորերդային իշխանությունը վո՛չ մի ջանք ու միջոց չի խնայում:



Յ Ա Ն Կ

	Եջ
1. Դեպի բերքի բարձրացում	3
2. Բերքի բարձրացումը	4
3. Լավ վարը	6
4. Վճրտեղից և ինչպես կարելի չէ ձեռք բերել գութաններ և այլ գործիքներ	9
5. Յերբ և ինչպես պետք է անել վարը	10
6. Ի՞նչով և յերբ պետք է պատրաստել հողը .	14
7. Լավ սերմացուն և նրա պատրաստելը . . .	17
8. Սերմացուն պետք է արտահանել	20
9. Շարքացանքան ու նրա արդյունքները . . .	21
10. Ցանքի ջրելն ու խնամելը	25
11. Բերքի բարձրացումը մի նոր հաղթանակի .	28

16. Հայաստանի Կոմմունիստական Կուսակցության
Կենտրոնական Կոմիտեի Ջորջոզ Պլենումի Բա-
նաձեվերը (սպառված) 15 »
17. Ռ. Արմենյան. — Սոշոր յեղջյուրավոր անասուն-
ների ժանտախարը (սպառվ.) 15 »
18. Հ. Ազատյան. — Գյուղատնտեսական բանվորութ.
և միջազգ. կոմմունիստական շարժումը (սպառ.) 40 »
19. Ն. Խան-Աղյան. — Ուղեցույց արգյունավետ խոզա-
բուծության 15 »
20. Չերգինանգով. — Հավարուծ. և նրա ոգուտն. (սպ.) 20 »
21. [Redacted] 20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Կապվատը և կա-
նեփը (սպառ.) 20 »
23. [Redacted] 15 »
24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության
անհասանելի փայտեղեն բաց քոզելու համար
(պաշտոնական) 30 »
- 25, Պրոմ. Ա. Վ. Քալանթար. — Կաթնատու կովի կերակր. 15 »
- 26, Ա. Ա. Տրիֆոնով. — Ինչու պետք է ցելը շուտ անել 15 »
27. [Redacted] 20 »
28. [Redacted] 20 »
29. Լ. Սուբբոսին. — Կովի դատը (ազրո-պիյես) 5 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Տիզկանեփ (սպառ.) 25 »
31. Իս. Տեր-Ներսիսյան. — Պտղատու ծառերի փաստ-
տուններն ու հիվանդությունները 20 »
32. [Redacted] 15 »
33. Արագի. — Տրակտորը (ազրո-պատմվածք) 15 »
34. Յալաջի. — Սորհրդավոր տրտունջներ ազրո-զրույց 20 »
35. Խնկո-Ապեր. — Գյուղատնտ-անասնաբույժը և իր
ազրո-զրույցը 20 »
36. Ս. Երիզուից. — Տասը պատգամ անասնապահին
(բ. սպառ.) 60 »
37. [Redacted] 40 »
38. [Redacted] 40 »

39. Ս. Սքանալյան.— Գուլթան, թե՛ արոր (սպառ.) 10 է.
40. Վ. Բուլկով.— Այժն աղքատի կոյն և (սպառված) 20 »
41. Խ. Տեր-Ներսիսյան.— Գումաղբը 20 »
42. Ի. Կուզեցով.— Լենինը և գյուղացիությունը 30 »
43. Ս. Մուսեղյան.— Անտառը պետք է հաշվով կտրել 5 »
44. Խ. Տեր-Ներսիսյան.— Ինչպես պատվասակ պլատ-
դատու ծառերը 10 »
46. Հ. զատյան.— Յեռադաշտից դեպի սոցիալիզմ՝
կոոպերացիայի վրայով 1 ս. 50 »
47. Վ. Ս. Միխայլով.— Տավարի վարակիչ հիվանդու-
թյունները 5 »
48. Մ. Թումանյան.— Վիկ 25 »
50. Նոյեմբերի նամակարհին (ժողով.) (սպառ.) 5 »
51. Պրոֆ. Ս.վ. Գալանթար.— Կաթնառատ կովի ընտ-
րությունը և նախիրի ազնվացումը 20 »
52. Հրահանգ գյուղատնտ. կոոպերատիվ ընկերութ.
տոմարագրելու կարգի մասին (հավ. «Գյուղ. կյանք»-ի)
53. ԽՍՀՄ Հողագագործության լեվ հողաճեցարա-
րության ընդհանուր հիմունքները 20 »
54. Հ. Փիլոսոֆյան.— Հողժողովումտի 1927/28 թ. գոր-
ծունեությունը
55. Ա. Աքանալյան.— Դեպի բերքի բարձրացում

7184

2013

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ս. Վերմիսյան.— Պողոտու այգին ու նրա խնամքը
2. Վ. Պ. Դուբրինին.— Չիերի արհեստական բեղմնավորումը
4. Ս. Իսահակյան.— Հանրամատչելի զրուցյանը գինե-
գործութ. մասին

ԳԻՄԵԼ՝ Տերեվյան, Հողժողովումտ՝ Հրատարակչության:
Հայգրքի կենտրոնական լեվ գավառական գրա-
խանություններին, Գավհողաժին կրին:

« Ազգային գրադարան



NL0078120

